№ 176 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29 1898 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29 № 176

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

«Մշակի» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., մի ամսվանը 1 ռուբլի։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բազարնայա և Բարօնսկայա փողոցն. անկիւն)։ Ուրիշ քաղաքներից պէտք է դիմել այս հասցէով. ТИФЛИСЪ, редакція «Мшакъ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «Mschak».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրականութեան անկումն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բաֆֆիի արձանի բացումը. Քաղաքագլխի ընտրութիւնը Երևանում. Նամակ Ախալքալաքից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի միջազգային կոնգրէս Լիսաբոնում. Դրէյֆուսի գործը. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անդրէաս Արծրունի։

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄՆ

—

Եւրոպական պարբերական հանդէսների և փիլիսոփայական ամսագրերի մէջ քննադատութեան առարկայ է դարձել մի շատ կարևոր հարց, որին նուիրվում են բազմաթիւ յօդուածներ և ուսումնասիրութիւններ։ «Մեր ժամանակում այլ ևս չը կայ համաշխարհային գրականութիւն, այնպիսի մի գրականութիւն, որ ազդէր հումանիտարական, իդէալական ձգտումների, քրիստոնէական և փիլիսոփայական գաղափարների զարգացման վրա, ինչպէս, օրինակ, անցեալ դարում Ֆրանսիական գրականութիւնը, որ կատարում էր համաշխարհային գրականութեան դերը»—ահա՛ այն մեծ տրտունջը, որ լսվում է շատ նշանաւոր գրողների բերանից։

Գրականութիւնը, մանաւանդ փիլիսոփայական գրականութիւնը ահագին դեր է խաղացել բոլոր ազգերի բարոյական և մտաւոր, նոյն իսկ քաղաքական վերածնութեան գործում. նա է եղել հումանիտարական մտքերի, իդէալական ձգտումների տարածողը. նա է եղել կոպիտ, կոշտ բարքերի ազնուացնողը. նա է եղել քրիստոնէական բարոյական վեհ գաղափարների տարածման նպաստողը, և չը կայ քաղաքակրթութեան ընդունակ մի ազգ, որի բարոյական, մտաւոր, քաղաքական վերածնութիւնը, զարգացումը կատարված լինի առանց գրականութեան ազդեցութեան։ Որքան բարձր է մի ազգի գրականութիւնը, այնքան աւելի և քաղաքակրթված է այդ ազգը։ Սակայն այժմ, գիտութեան ամենազարգացած շրջանում, այն բոպէին, երբ մարդկութիւնը ոտք է դնում XX-րդ դարի շէմքի վրա, երբ քաղաքակրթութիւնը հասել է հսկայական զարգացման, գրականութիւնը այլ ևս չունի այն փրկարար, բարերար և սաստիկ ազդեցութիւնը, որ նա գործում էր առաջ, և հէնց շնորհիւ նրա այդ թոյլ ազդեցութեան, հումանիտարական, իդէալական ձգտումները, քրիստոնէական և փիլիսոփայական վեհ գաղափարները հետզհետէ չքանում են ժամանակակից քաղաքակիրթ մարդկութեան սրտից և հոգուց։

Միւս կողմից միջազգային շրջանում որքան աւելի շատ են աճում նիւթական շահերը, որքան ազգերը աւելի շատ են հարստանում, որքան արդիւնաբերական և տեխնիկական ասպարէզներում աւելի լայնածաւալ զարգացումն է ձեռք բերվում, ազգերը աւելի քիչ հակամէտ են գտնվում միմեանց հասկանալու և միմեանց աւելի քիչ եսասիրութեամբ վերաբերվելու։ Քրիստոնէութեան ազդեցութիւնը հետզհետէ թուլանում է. անցեալ դարի հումանիտարական ու իդէալական փիլիսոփայութիւնը այժմ վերածվել է այն ճակատագրական ուսման, թէ թոյլերը և տկարները անպատճառ պէտք է մեռնեն, չքանան աշխարհի երեսից, և այդ օրէնքը համարվում է ամենքի կողմից իբրև մի հասարակ և անժխտելի օրէնք։ «Մեռի՛ր, որովհետև թոյլ ես, տկար, որովհետև չունես ուրիշների նման քեզ պաշտպանելու ձանկեր»—ահա՛ ժամանակակից փիլիսոփայութեան ուղն ու ծուծը։

Այդ ճակատագրական փիլիսոփայութեան դէմ պէտք է մաքառէր գրականութիւնը, որ միշտ հանդիսացել է, գոնէ անցեալ դարերում, մարդկային ամենավեհ մտքերի, ամենանուիրական իրաւունքների պաշտպանը. նա պէտք է քարոզէր այն ուսումը, թէ թոյլ մարդը ևս, տկար ազգը ևս իրաւունք ունի ապրել, ինքնուրոյն գոյութիւն ունենալ, թէ բոլոր ազգերը և մարդիկ եղբայրներ են և կոչված են խաղաղ, կուլտուրական կեանքի։

Բայց, ցաւում են եւրոպացի գրողները, այժմ այդպիսի գրականութիւն չը կայ։ Եւ ի՞նչ է պատճառը։ Պատճառը այն սոսկալի միլիտարիզմն է, որ 19-րդ դարի սկզբից սկսել է ծանրանալ Եւրոպայի վրա։ Ֆրանսիայի ժողովրդական հարստութեան նուաղելը և նրա գրականութեան ազդեցութեան թուլանալն սկսվեց Նապոլէոնեան պատերազմներից և նրանց հետ առաջ եկած միլիտարիզմի դարեշրջանից։ Եւ այսօր, երբ միլիտարիզմի գաղափարը յաղթանակ է տարել ու գրականութեան ազդեցութիւնը թուլացել, դրա պատճառը պէտք է որոնել այն հանգամանքի մէջ, որ ազգերի բոլոր հոգևոր նիւթական ոյժերը ուղղված են միլիտարիզմի կողմը։ Ինքը գիտութիւնը իր բոլոր ոյժը դրած է դէնում միլիտարիզմի յաղթանակի համար, որովհետև հնարողները և ինժենէրները խրախուսում են պատերազմը՝ նրան աւելի գիտական բնաւորութիւն տալով իրանց գիւտերով։

Սակայն միլիտարիզմի գործած չարիքների դէմ մաքառելու միակ միջոցը, եւրոպական գրողների կարծիքով, դարձեալ գրականութիւնը պէտք է լինի, որովհետև նա՛ միայն կարող է քաղաքակիրթ ազգերի մէջ հոգևոր շահեր զարթեցնել, նա՛ միայն կարող է ենթարկել ազգերը բարոյական վերածնութեան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՖՖԻԻ ԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

—

Կիրակի օրը, սեպտեմբերի 27-ին, Խօջիվանքի գերեզմանատանը, տեղի ունեցաւ Բաֆֆիի արձանի բացումը։ Ժամի 12-ին գերեզմանատանը հաւաքվել էր մեծ բազմութիւն. հոգևորականութիւնը գերեզմանատան մատուռի մէջ պատրաստ մատուցանելուց յետոյ, գնաց դէպի հանգուցեալ վիպագրողի գերեզմանը, ուր նոր դրած մահարձանի առաջ հոգեհանգիստ կատարեց։ Դրանով էլ վերջացաւ ամբողջ հանդէսը և ժամի 2-ին բազմութիւնն սկսեց ցրվել։

Բաֆֆիի մահարձանը, որ պատրաստվել է նրա կարիչ Բաշինջաղեանի ծրագրով և անմիջական հսկողութեան տակ, ներկայացնում է մարմարեայ մի բարձր սիւն. քառակուսեայ պատուանդանի վրա գրված է երկու տող՝ «Ձայն տուր, ով ծովակ» ոտանաւորից. նրանից բարձր, գեղեցիկ պսակի մէջ փորագրված է «Բաֆֆի» անունը և այնուհետև սպիտակ սիւնը կոլոր ձև է ընդունում. նրա ծայրին, գեղեցիկ օրնամենտներով զարդարված պատուանդանի վրա, դրված է մարմարեայ քնար։ Թէ իր բարձրութեամբ և թէ գեղեցկութեամբ Բաֆֆիի մահարձանը առաջինն է Խօջիվանքի գերեզմանատան մէջ և շատ գեղեցիկ տպաւորութիւն է թողնում։ Միակ պակասութիւնը, որ աչքի է ընկնում, այն է, որ մահարձանը չէ շրջապատված երկաթէ վանդակով. արձանը բաց է ամեն կողմից։ Ինչպէս յայտնի է յանձնաժողովի յայտարարութիւնից, այդ պակասութիւնը վերացնել այժմ հնար չը կայ, քանի որ արձանի համար հաւաքված փողերը ամբողջապէս ծախսված են։ Եւ սակայն, նկատի առնելով այն անխնամ դրութիւնը, որին մատնված է Խօջիվանքի գերեզմանատունը, այլ և այն, որ ասիական ազգերին յատուկ է տգիտաբար վնասել յուշարձանները, շատ ցանկալի է, որ հայ հասարակութիւնը այնքան միջոցներ տար, որ կարելի լինէր պահպանել մեր վիպագրողի մահարձանը, մանաւանդ որ այդ բանի համար մի քանի հարիւր ռուբլի է միայն հարկաւոր։

ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ

(Նամակ Երևանից)

սեպտեմբերի 23-ին

Սեպտեմբերի հետ վրա հասան շարժում և կենդանութիւն, և ամառվայ ամիսների պատճառով կանգ առած հարցերը կրկին ընթացք ստացան։ Այդպէս ի միջի այլոց կարգադրվեց նաև քաղաքագլխի ընտրութեան հարցը։ Ինչպէս արդէն «Մշակի» ընթերցողներին յայտնի է, Երևանի նոր դումայի կազմութեան—ձայնատուների—ընտրութիւնները տեղի ունեցան դարնան ամիսներում, որ և իր ժամանակին վարչութեան կողմից հաստատվեցին, սակայն նոր դումայի պաշտօնի անցնելը և քաղաքագլխի ընտրութիւնը յետաձգվեցին մինչև այժմ։ Սեպտեմբերի 21-ին դումայի դահլիճում նշանակված էր նոր ձայնատուների ընտրութիւնը (օրինակ, Սուչինի, Երօֆէէվի և ուրիշների աշխատութիւնները)։ Արծրունու խստաբարոյութեան պատճառով նրա այդ տեսակ ուղղութիւնը բազմաթիւ մանր ընդհարումներ էր առաջ բերում։ 80-ական թուականների կիսում այդ տարաձայնութիւնը գերմանական պրոֆէսորների մի մասի հետ աւելի սաստկացաւ։ Արծրունին անխնայ տպագրական քննադատութեան ենթարկեց Բերլինի մեծ միզէներից մինի գիտական-հանրաքանաչական ցուցակը, որ հրատարակել էր պրոֆէսոր Հիրչվալտոնը, մի դրացուցակ, որ, յիրաւի, աչքի էր ընկնում իր տգիտութեամբ, թէև ուսումնականութեան արտաքին փայլով ծածկված էր։ Այդ խիստ և երբեմն անժուժկալ քննադատութիւնը, ինչպէս երևաց, ընդ միշտ փակեց նրա առաջ հանրապետական ամբիոնները Գերմանիայում։ Արծրունու փորձերը՝ ստանալ ամբիոն Ռուսաստանում և Իտալիայում (որի լեզուին կատարելապէս ծանօթ էր), անաջող անցան և նա մնաց Ախէնում։ «Հանրագիտական» առարկաների դասաւորութեան բնաւորութիւնը Գերմանիայի բարձր տեխնիական դպրոցներում դանազանվում է համալսարանական դասաւորութեան բնաւորութիւնից նրանով, որ առաջինը կախված է դասաւորներից։ Այդ ժամանակ երկու հոսանք կռիւ էին մղում. մինը ցանկանում էր տալ այդ կրթական հաստատութիւններին նեղ—գործնական բնաւորութիւն, սահմանափակեալ վիպագրողի գերեզմանը, ուր նոր դրած մահարձանի առաջ հոգեհանգիստ կատարեց։ Դրանով էլ վերջացաւ ամբողջ հանդէսը և ժամի 2-ին բազմութիւնն սկսեց ցրվել։

Բաֆֆիի մահարձանը, որ պատրաստվել է նրա կարիչ Բաշինջաղեանի ծրագրով և անմիջական հսկողութեան տակ, ներկայացնում է մարմարեայ մի բարձր սիւն. քառակուսեայ պատուանդանի վրա գրված է երկու տող՝ «Ձայն տուր, ով ծովակ» ոտանաւորից. նրանից բարձր, գեղեցիկ պսակի մէջ փորագրված է «Բաֆֆի» անունը և այնուհետև սպիտակ սիւնը կոլոր ձև է ընդունում. նրա ծայրին, գեղեցիկ օրնամենտներով զարդարված պատուանդանի վրա, դրված է մարմարեայ քնար։ Թէ իր բարձրութեամբ և թէ գեղեցկութեամբ Բաֆֆիի մահարձանը առաջինն է Խօջիվանքի գերեզմանատան մէջ և շատ գեղեցիկ տպաւորութիւն է թողնում։ Միակ պակասութիւնը, որ աչքի է ընկնում, այն է, որ մահարձանը չէ շրջապատված երկաթէ վանդակով. արձանը բաց է ամեն կողմից։ Ինչպէս յայտնի է յանձնաժողովի յայտարարութիւնից, այդ պակասութիւնը վերացնել այժմ հնար չը կայ, քանի որ արձանի համար հաւաքված փողերը ամբողջապէս ծախսված են։ Եւ սակայն, նկատի առնելով այն անխնամ դրութիւնը, որին մատնված է Խօջիվանքի գերեզմանատունը, այլ և այն, որ ասիական ազգերին յատուկ է տգիտաբար վնասել յուշարձանները, շատ ցանկալի է, որ հայ հասարակութիւնը այնքան միջոցներ տար, որ կարելի լինէր պահպանել մեր վիպագրողի մահարձանը, մանաւանդ որ այդ բանի համար մի քանի հարիւր ռուբլի է միայն հարկաւոր։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

Մոսկվայի „Русскія Вѣдомости" լրագրի սեպտեմբերի 23-ի համարում Վ. Ի. Վերնադսկի ստորագրութեամբ տպվել է հետևեալ յօդուածը հանգուցեալ պրոֆէսոր Անդրէաս Արծրունու գիտական գործունէութեան մասին։

—

«Այս օրերս հեռագիրը լուր բերեց Անդրէյ Երեմէէվիչ Արծրունու, Ախէնի պօլիտեխնիկումի հանրաքանութեան պրոֆէսորի մահվան մասին։ Յանձին Արծրունու գերեզման իջաւ Ռուսաստանի հանրաքանութեան ամենալաւ գիտցողներից և հանրաքանութեան ու բիւրեղագրութեան ամենազգոյշ և ամենաճիշդ ուսումնասիրողներից մինը։ Մանր հիւանդութիւնը, որ հասցրեց նրան գերեզման, երկար տարիներ թուլացնում էր նրա ոյժերը և թոյլ չէր տալիս նրան անձնատուր լինել այն յարատև ընդարձակ գիտական աշխատութեան, որին նա ձգտում էր։ Նրա մահը ընդհատեց նրա մի քանի կիսատ մնացած աշխատութիւնները, որոնց թւում և Ուրալի հանրաքանութիւնը, որ նա վաղուց պատրաստում էր։

«Անդրէաս Արծրունին ծնվել է Կովկասում և ծագում էր հին հայկական տոհմից։ Արծրունին երբէք չը կտրեց իր կապերը Կովկասի հետ և իր կեանքի վերջին տարիներում նա վերսկսեց Կովկասի հանրաքանութեան և պետրոգրաֆիայի հետազօտութիւնը, և նրա հետաքրքրութեան գլխաւոր առարկան Արարատն էր։ Նրա գիտական և մանկավարժական գործունէութիւնը անցել է Գերմանիայում։ Ստանալով ուսումը Դորպատի համալսարանում, նա լրացրեց իր կրթութիւնը գերմանական համալսարանում, գլխաւորապէս Բերլինի համալսարանում։

«Նա յաջորդաբար դարձաւ կառավարիչ Բերլինի, Բրեսլավլի և Սարաղոսգի հանրաքանական ինստիտուտների և վերջապէս 80-ական թուականների կիսում ստացաւ հանրաքանութեան ամբիոնը Ախէնի բարձր տեխնիական դպրոցում, որ պահեց մինչև իր մահը։ Ախէնի պօլիտեխնիկումում նա մի քանի անգամ դեկանի պաշտօնը կատարեց։ Նրա գործունէութիւնը Գերմանիայում առանձին նպաստաւոր կերպով չը դասաւորվեց։ Լինելով Գերմանիայի ամենահեղինակաւոր, ամենաաշխատասէր և գիտնականապէս կրթված հանրաքանութեան պրոֆէսորներից մինը, նա հեռու էր մնացել համալսարանական ամբիոններից։ Նրան չաջողվեց դրաւել այդ ամբիոններից ոչ մինը. բացվող արձակ տեղերի համար ընտրվում էին շատ անգամ այնպիսի անձինք, որոնք համեմատաբար աւելի քիչ գիտնական հեղինակութիւն էին վայելում։ Մասամբ դրա պատճառն այն էր, որ նա օտարական էր և, կարծեմ այդպէս մնաց մինչև իր կեանքի վերջին տարիները։ Բայց գլխաւոր պատճառը Նրա բնաւորութեան ուղղամտութիւնը և խստապահանջութիւնն էր։ Ա. Արծրունին միշտ հեռու էր ազգայնական այն ապականող ձգտումներից, որոնք յարմարվում են և մտնում գիտութեան համամարդկային թագաւորութեան մէջ։ Նոյն իսկ գերմանական համալսարաններում վերջին ժամանակներս, մանաւանդ նրանց աւելի երիտասարդ անդամների շրջանում, զգացվում է ազգայնական չովինիզմի հոտը և չափազանց փառաբանվում է այն հանգամանքը, թէ Գերմանիայում գիտութիւնը շատ բարձր է կանգած։ Ա. Արծրունին միշտ խիստ և որոշակի հակառակում էր այդ հոսանքին։ Լինելով բազմալեզուագէտ, ճիշդ կերպով հակելով գիտութեան զարգացման զանազան երկրներում, հասցնելով գիտական բարեխղճութիւնը գրեթէ մինչև ծայրագոյութեան, Արծրունին թէ իր և թէ իր աշակերտների աշխատութիւնների մէջ արտակարգ խնամքով ցոյց էր տալիս բոլոր հետազօտողների արդիւնքները, առանց խտրութեան ազգութեան և լեզուի, որով հրատարակված էին լինում այդ արդիւնքները։ Այդ կողմից չէ կարելի չը յիշել նրա ծառայութիւնները ռուս հետազօտողների վերաբերմամբ. ռուս լեզուով տպված շատ աշխատութիւններ յայտնի են դարձել գիտական գրականութեան մէջ միմիայն նրա ջանքերի և գրչի շնորհիւ (օրինակ, Սուչինի, Երօֆէէվի և ուրիշների աշխատութիւնները)։ Արծրունու խստաբարոյութեան պատճառով նրա այդ տեսակ ուղղութիւնը բազմաթիւ մանր ընդհարումներ էր առաջ բերում։ 80-ական թուականների կիսում այդ տարաձայնութիւնը գերմանական պրոֆէսորների մի մասի հետ աւելի սաստկացաւ։ Արծրունին անխնայ տպագրական քննադատութեան ենթարկեց Բերլինի մեծ միզէներից մինի գիտական-հանրաքանաչական ցուցակը, որ հրատարակել էր պրոֆէսոր Հիրչվալտոնը, մի դրացուցակ, որ, յիրաւի, աչքի էր ընկնում իր տգիտութեամբ, թէև ուսումնականութեան արտաքին փայլով ծածկված էր։ Այդ խիստ և երբեմն անժուժկալ քննադատութիւնը, ինչպէս երևաց, ընդ միշտ փակեց նրա առաջ հանրապետական ամբիոնները Գերմանիայում։ Արծրունու փորձերը՝ ստանալ ամբիոն Ռուսաստանում և Իտալիայում (որի լեզուին կատարելապէս ծանօթ էր), անաջող անցան և նա մնաց Ախէնում։ «Հանրագիտական» առարկաների դասաւորութեան բնաւորութիւնը Գերմանիայի բարձր տեխնիական դպրոցներում դանազանվում է համալսարանական դասաւորութեան բնաւորութիւնից նրանով, որ առաջինը կախված է դասաւորներից։ Այդ ժամանակ երկու հոսանք կռիւ էին մղում. մինը ցանկանում էր տալ այդ կրթական հաստատութիւններին նեղ—գործնական բնաւորութիւն, սահմանափա-

*) Ա. Արծրունին մինչև մահը մնաց ռուսահպատակ։
„Մշակի" Խմբ.

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ ՕՐՍՈՒՆԻՆ ՀԵՏ

Ընդհանրապես 25-ին

—

ՑԱԺՈՆՈՒԹԻՒՆ ԿՈՒՌՈՂ

Ինչպէս տեղեկացանք, Սեբաստիոյ «Ազգային Մեսրոպ» դպրոցի տնօրէն Գ. Ղազարեան Ամերիկայէ դարձեալ ուղարկուած է 105 ոսկի՝ Սեբաստիոյ Ազգային Դպրոցի Ֆիզիկական Լաբորատորիայի համար։ Նշեալ գումարը Ամերիկայի Ազգային Դպրոցներու Միութեան Գանձապետ Պ. Գ. Ղազարեանի կողմէ ուղարկուած է Սեբաստիոյ Ազգային Դպրոցի Տնօրէնութեան

հնութիւններ, որոնցով կարելի է ուսումնասիրել ուղղափառ եկեղեցու դրութիւնը անցեալում։ Հնադարանի կանոնադրութիւնը հաստատված է սինոդի կողմից 1889 թվի յունվարի 24-ին։

—

«Մանուկների հոգատարութեան ընկերութեան» նախագահ Ա. Կօլիւբակին խնդրում է մեզ յայտնել, որ առաջիկայ կիրակի օրը, հոկտեմբերի 4-ին, նշանակված է ընկերութեան օգտին մի բարեգործական բազար, որի համար ցանկալի է ստանալ նուէրներ իրերով։ Նուէրներն ընդունում են՝ 1) Օ. Մ. Բուտուրլինա, 2) Մ. Ֆ. Կլաուս, առաջին իգական գիմնազիայում, 3) Մ. Ֆ. Գօրօշկօվա, երկրորդ իգական գիմնազիայում, 4) իշխ. Ս. Վ. Արղութինսկայա, Միքայէլեան փողոց, իր սեփական տանը, 5) Ա. Ի. Շչերբինինա, Միքայէլեան փողոց № 134, 6) Ա. Պ. Օստրօվսկայա, նոյն փողոց № 136, 7) Ա. Մ. Կօլիւբակին, իւնկերների դպրոց, 8) Ի. Ֆ. Դրբօզլով, երկրորդ արական գիմնազիայում, 9) բժիշկ Ա. Հ. Զարդարեանց, Սաղովայա № 56 և 10) բժիշկ Ե. Զ. Լօրիս-Մելիքով, Վելեամինովսկայա փողոց № 19.

—

«Сынъ Отечества» լրագիրը հաղորդում է, որ արդարադատութեան մինիստրութիւնը ներքին գործերի մինիստրութեան հետ ընտրելու են մի յատուկ յանձնաժողով՝ քննելու համար Կովկասում զէստվօի և դատաստանական բէֆօրմներ մտցնելու հարցը։ Ցիշեալ յանձնաժողովի զբաղմունքները կը սկսվեն այս տարվայ նոյեմբեր ամսի վերջին։

—

ԵՐԵՒԱՆԻՑ հաղորդում են, որ սեպտեմբերի 20-ին, գիշերը, Թալար կոչված սարդարի այգու առաջ, սպանեցին մի ծառայի՝ գլուխը զատելով մարմնից. հաւատացնում են, որ այս ամսում տասնից աւելի վիրաւորելու և սպանելու դէպքեր են տեղի ունեցել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԷՍ ԼԻՍԱԲՕՆՈՒՄ

Սեպտեմբերի 14-ին Պօրտուգալիայի մայրաքաղաքում բացվեց մամուլի միջազգային կոնգրէսը։ Սա թվով հինգերորդն է։ Սպասում էին, որ զանազան երկիրներից կը հաւաքվեն 415 հոգի, բայց շատերը չեկան։ Կոնգրէսի բացումը տեղի ունեցաւ մեծ հանդիսով. պօրտուգալական թագաւոր Դօն-Կարլոս I իր ամուսնու հետ եկաւ ժողովը բաց անելու և բաղմեց նախագահական ամբիոնի վրա։ Կոնգրէսի նախագահ Զինդէը, որ Վիեննայի մի լրագրի խմբագիրն է, սկսեց մի ճառ, որի սկզբում մամուլի ներկայացուցիչների կողմից շնորհակալութիւն յայտնեց թագաւորական զոյգին, որ իր ներկայութեամբ ցոյց է տալիս դէպի մամուլն ունեցած իր թանկագին համակրանքների և հովանաւորութեան նշանները։ Նախագահը յայտնեց, որ ժողովը որ և է քաղաքական, կրօնական կամ ազգային հարց արծարծելու նպատակ չունի, այլ պիտի զբաղվի լոկ մամուլին վերաբերեալ գործերով։ Կոնգրէսի ձգտումն է «կազմակերպել գրական զօրաքանակը, որի զինուորները պիտի որոշվեն իրանց անձնական արժանաւորութեամբ, հայրենասիրութեամբ, նպատակների ազնուութեամբ և գործողութիւնների ազնուութեամբ։ Ահա մեր ընկերակցութեան, այսպէս ասած, հոգին։ Սրանով մամուլը միջազգային ամուր, անյողդող ցանկութիւն է արտայայտում բարիք գործելու, նա ուզում է իր ժամանակին դառնալ ամենավճռական գործօն՝ ազգերի մէջ խաղաղութիւն և համաձայնութիւն հաստատելու հարցի մէջ»։ Կարլոս թագաւորը յայտնեց իր երախտագիտութիւնը մամուլի կողմից յայտնած հաճակրանքների համար, ասաց որ ինքը գոհ է, բաց անելով մամուլի կոնգրէսը այն դահլիճում, ուր մի ժամանակ բաց արաւ բժշկական կոնգրէսը։ Թագաւորը ասաց որ թէ բժշկականութիւնը և թէ մամուլը միանման ազնիւ նպատակի են հետևում. մէկը միջոցներ է որոնում մարմնի տանջանքների դէմ, իսկ միւսը—հոգու հիւանդութիւնների դէմ։ Ի վերջոյ նա աւելացրեց, որ հպարտանում է ներկայ լինելով մի ժողովի, ուր այնքան ընտրեալ խելքեր և համաշխարհային մամուլի լաւ ոյժեր կան։

Կոնգրէսը նիստեր կունենայ ընդամենը երեք օր։ Ծրագրի մէջ նշանակված ամենակարևոր հարցերն են՝ թղթակիցների միջազգային բիւրո հիմնելը, քաղաքական յօդուածների վերաբերմամբ սեփականութեան իրաւունքի հարցը, մամուլի գործիչների համար միջազգային դատարան հիմնելը, մամուլի մասին գրութիւն ունեցող զանազան օրէնսդրութիւնների համեմատութիւնը։ Լիսաբօնի մամուլի գործիչների ընկերակցութիւնը, անբաւական մնալով այդ ծրագրից, միաձայն վճռել է ներկայացնել կոնգրէսին հետևեալ երկու առաջարկութիւնները. 1) որ Լիսաբօնի կոնգրէսը խնդրէ զանազան երկիրների կառավարութիւններից վերաքննութեան ենթարկել մամուլի օրէնքները այն մտքով, որ լրագրական գործիչները կարողանան արժանաւոր կերպով և ազնուութեամբ արտայայտել իրանց մտքերը, և 2) որ կոնգրէսը խնդրէր մի քանի երկիրների կառավարութիւններից կատարելապէս ոչնչացնել մամուլի յանցանքներ անուանված գործերը։

ԴՐԷՅՖՈՒՍԻ ԳՈՐԾԸ

Ֆրանսիայում յուզմունքը օրէցօր սաստկանում է. այդ լարված դրութեան աւելացաւ նաև բանտարների գործադուլը, որի մասին տեղեկութիւն բերին երէկվայ հեռագիրները։ Սեպտեմբերի 19-ին յայտնի գործիչ Ժօրէս մի դասախօսութիւն կարդաց Դրէյֆուսի գործի մասին։ Դահլիճը, որի մէջ տեղաւորվում են մօտ 4000 մարդիկ, ծայրէծայր լի էր, չը նայած որ մուտքի համար վճարում էին կէս ֆրանկ։ Ժօրէս խօսում էր մեծ ոգևորութեամբ և ժողովը յափշտակված էր։ Հասարակութիւնը, որի մէջ շատ կանայք կային, աղմկալի ցոյցեր արաւ ի պատիւ Ժօրէսի։ Փողոցներում երկար շարունակվում էին ոգևորված աղաղակներ՝ Պիկարի և Զոլայի հասցէին։

Գնդապետ Պիկար խիստ բանտարկութեան է ենթարկված. ոչ ոք, նոյն իսկ նրա ամենամօտիկ բարեկամներից, չէ կարող տեսնվել նրա հետ։ Ասում են, որ Պիկարի հետ վարվում են այնպէս, ինչպէս 1894-ին վարվում էին Դրէյֆուսի հետ։ Պարիզում այժմ մեծ ագիտացիա է սկսվել գնդապետին ազատելու հաղար։ Ամբողջ հանրապետական կուսակցութիւնը դատապարտում է գեներալ Ցուրլինդէնին, որ ապօրէն գործ է սկսել Պիկարի դէմ։ Պահանջում են, որ նրան հեռացնեն Պարիզի նահանգապետի պաշտօնից։

Ինչպէս յայտնի է, Դրէյֆուս մեղադրվում է այն բանի մէջ, որ գաղտնի դօկումենտներ է տուել գերմանական զինուորական կցորդ Շվարցէօպպէլին։ Մի ֆրանսուհի հետևեալ նամակն է տպել գերմանական «Kölnische Zeitung» լրագրի մէջ. «Դուք կապացուցանէիք, որ բարի էք, եթէ դիմէիք գնդապետ Շվարցկօպպէլին, կամ այն անձին, որ կարող է թոյլատրել նրան և խնդրէք ձայն բարձրացնել, վերջապէս։ Նրա սիրտը և խիղճը չեն կարող արգելել նրան այդ բանը, նկատի առնելով սարսափելի դրութիւնը։ Այժմ հարցը ֆրանսիացիների կամ գերմանացիների մասին չէ, այլ բոլորովին միանման մարդկային էակների մասին, որոնք ճշմարտութեան և ազնուութեան ոգով տոգորված՝ արդարութեան ձայնով խնդրում են ազատել նահատակին։ Եթէ այն մարդիկ, որոնք գիտեն բոլոր ճանապարհները և կարող են պարզել ամեն ինչ, տեսնէին թէ որպիսի վիշտ է բոյն դրել մեր ընտանեկան օջախում, եթէ տեսնէին, թէ ինչպէս ենք լաց լինում մենք, թոյլ կանայքս, և լռութեան մէջ տանջվում ենք այդ խեղճ հրէայի և նրա կնոջ նահատակութիւնների պատճառով... Այդ թշուառը կարողութիւն չունեցաւ մինչև ծնվելը փոխել իր կրօնը. բայց մենք, մենք մեզ համար մի առանձին մեծահոգութիւն ենք համարում, որ չենք ծնվել այդ կրօնի մէջ, ուստի և այն ամենը, ինչ չէ վերաբերում մեր սուրբ կրօնին, համարվում է ողորմելի և ատելութեան արժանի։ Այո, եթէ նրանք, որոնց ես խնդրում եմ ձեզ աղաչել մեր կողմից, տեսնէին մեր տանջանքները, մի կողմ կը դնէին ամեն մի քաղաքականութիւն և մարդասիրական քաջագործութիւն կը կատարէին, ազատելով մեր սրտերը այս անասելի տանջանքից։ Ուրեմն խնդրեցէք նրանցից այս բարի գործը. թող, վերջապէս, գնդապետ Պիկարի տանջանքներն էլ շարժեն ձեր սիրտը։ Այն ժամանակ ֆրանսիացի կանայք, որոնց սիրտը ինչ էլ պատահի, իր պատշաճ տեղն է գտնվում, կասեն ինձ հետ միասին՝ մենք կը յիշենք այդ սրտագին գործը»։

Գերմանական լրագիրը ցաւում է, որ չէ կարող կատարել այդ խնդիրքը. պատճառները քաղաքական են։ Եւ հասկանալի է. երբ է տեսնված, որ Գերմանիայում սիրտը երբ և իցէ բռնէ քաղաքական հաշիւների տեղը...

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՑԻՑ

Տրապիզոն, սեպտեմբերի 18-ին

Կ. Պոլսի հայոց թերթերը այժմ այնպիսի մեռած տեսք ունին և այնքան տխրատուկ պարունակութիւն մ'ունին, որ մարդ ուղղակի ձանձրոյթ կը զգայ ձեռք առնելու։ Բայց քանի որ օտարերկրեայ լրագիրներ ստանալը պետական դատաճանութիւն կը համարուի, ինչ ընենք, ստիպուած ենք անտեսմամբ դատանալ։ Ահա «Բիւզանդիոն», «Փունջ», «Բիւրակն» և այլն։ Անխղճութիւն չէ ժամանակը զոհել այդ պարապութիւններու պարապը հասկանալու համար։ Մինայն «Արևելքը» կենդանութեան նշաններ կուտայ, երբեմն-երբեմն քննադատականներ կերևան «Ազգային» գործերու մասին, բայց երբ մարդու աչքը կիյնայ «Կենցաղագիտական բառգիրքի» վրա, հիասթափութիւնը կը սկսվի։ Ատեն մը Վենետիկեան հայրերը դպրոցներու մէջ «Քաղաքավարական» դասեր կուտային «Ասիացի» աշակերտներու, թէ հայուտած ժամանակ պատառաքաղը այսպէս պէտք է բռնել, գդալը այնպէս բերանը տանել և այլն. պէտք է հիմա ալ մեր նրբաճաշակ պօլսեցիները «Արևելքի» «կենցաղագիտական բառգիրքով» ելրևի «կոչտ» դաւառացիներուս սորվեցնեն, թէ «երբ էրիկ մարդ մը և կին մը միասին սանդուխէ մը վեր կելլեն, էրիկ մարդը պէտք է որ առջևէն քալէ, ու երբ...» Հոսհոսութիւնը որ բանին կըսեն,—այդ ալ կայ ձեր «կենցաղագիտական բառգիրքին» մէջ։

Բայց անցնինք «պարին», որ պ. Գ. Զօհրապ դեռեղած է «Արևելքի» օգոստոս 20-ի համարի մէջ։ Այդ պօլսական հովով սկսած առաջնորդողը հետևեալ հատուածներով կը վերջանայ. «... օր չանցներ որ դպիր, քահանայ, վարդապետ, եպիսկոպոսի ձեռնադրութիւնը չը լսուի. միշտ գործի վրա ենք. ներելի է հարցնել՝ որ հօտին համար են այս հովիւները. ժողովրդին կրօնափոխութեամբ պակսելուն դէմ՝ եկեղեցականներու թիւն անընդհատ յաւելումը պատրանք մը տալու համար է մեզի և այս խոտոր համեմատութիւնը իբրև ուղիղ ընդունելու համար որքան միամտութիւն կը պահանջուի մեզէ»։ «... Եթէ իրաւ է որ պատրիարքարանը իր տնօրինութիւններուն արդարութեամբը, իր որոշումներուն հանրային խղճմտանքի համաձայն ըլլալովը է որ պիտի պահէ բարոյական հեղինակութիւնը իր ժողովուրդին վրա՝ այն ամեն խնդիրներու մէջ, որոնցմով մամուլը առիթ ունեցաւ զբաղելու, այս հեղինակութիւնը անվթար մնացած չենք կարծեր»։ Ասենք և ասուց նման կարդ մը պատճառներ կը միանան երաժշտութիւնը կազմելու այն պարին զոր՝ քիչ շատ ամեն կողմ ժողովուրդը կը սկսի պարել, երգելով մեր Պատրիարքարանին երեսն ի վեր.

«Դուք մէջէն, ես քովէն.
Անցնինք դիմաց փոխենք տեղ»։

Ո՛հ, ո՛չ, յարգելի էֆէնդի, դաւառացի արիւնաքամ ժողովուրդը երբէք տրամադրութիւն չունի սոված փորով գատուիլ պարելու. այդ պարը ընդ երաժշտութեամբ Տատեան փաշայի, աջ ձեռքը Սիս, ձախը դէպի Վան երկնցուցած և ոտքերը դժբաղդ ժողովուրդի սրտին յենած, խելացնոր կը պարէ ու կը պարէ ձեր սրբազանը... Արդեօք կը վերջանայ՝ այդ «դուք մէջէն, ես քովէն»։

Տեղացի

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, սեպտեմբերի 19-ին

Դժուար չէր գուշակել, որ յայտնի կեղեքիչ և գիւղատէր Մաշադի Թաղիի գտած աջողութիւնները նոր-նոր չարիքներ պէտք է ծնեցնէին սալմաստեցիների գլխին։ Մաշադի Թաղին ուզածը կատարեց՝ բանտարկել տալով հայերին և խոշոր գումարներ փրկանք առնել տալով նրանցից։ Այս կերպով նա մեղը քսեց մեծ պաշտօնեաների շրթունքներին, որպէս զի այսօր ինքը կշտանայ։ Անկուշտ կեղեքիչը այս անգամ ընկաւ Սալմաստի Սավրա գիւղի գիւղացիների վրա։ Սավրան մի ժամանակ խալիսա (արքունական) էր և ժողովուրդը միշտ վճարում էր տարեկան ընդամենը 1700 թուման կառավարութեան՝ թէ իբրև մալիաթ, թէ հացահատիկների տասանորդ։ Գիւղը Մաշադի Թաղիի սեփականութիւն դառնալուց յետոյ՝ գիւղանիներից առնում է 3500 թուման մօտ մի գումար միայն մալիաթ տուրքի անունով, 1700 թումանը կառավարութեան բաժինը, մնացածն իր բաժինը. բացի դրանից պահանջում է նաև 4000 թուման արժութիւնի, պտուղների, խոտի և այլ բաների տասանորդ, դեռ չը հաշված այն անյայտ գումարները, որ տուգանք է առնում մինիցմիւսից՝ ծեծելով ու չարչարելով։ Ուրեմն կասկած չը կայ, որ մի տարվայ մէջ գուցէ 8000 թումանից աւելի փող է դուրս գալիս Սավրայից, մինչդեռ ամբողջ գիւղը՝ Մաշադի Թաղին դնել է կառավարութիւնից 4500 թումանով։

Մաշադի Թաղիի անխիղճ վարմունքից ճնշված ու զրկած գիւղացիք—հայ ու թուրք խառն՝ միացած դիմեցին Թաւրիզի կառավարութեան ու խիստ բողոքներ տուին գիւղատիրոջ անիրաւ պահանջումների և անդթութիւնների դէմ։ Թաւրիզի պարսկական կառավարութիւնը սկզբում հեռագրով հրաման արձակեց, որ գիւղացիք վճարեն Մաշադի Թաղիին 4500 թուման գիւղի արժէքը և գիւղը դառնայ արքունական, թէպէտ գիւղացոց համար այնչափ էլ ձեռնտու չէր այս ձևը, քանի որ իրանք էին վճարելու առանց տէր լինելու գիւղին, այնուամենայնիւ գուցէ կը համաձայնէին, ազատվելու համար գիւղատիրոջ հարստահարութիւններից. բայց ինչ արած, երբ միւս կողմից Թէհրանն իրաւունք տուեց Մաշադի Թաղիին սեփականատէր մնալ իր գիւղին և վարել ըստ առաջնոյն։ Թէպէտ և Սահակ եպիսկոպոս Այվատեան հեռագրով դիմեց Ամբաբէգը Ազամ Սաղրազամին և խնդրեց գիւղացիների իրաւունքի պաշտպանութիւնը, սակայն ինչ կը լինի հետևանքը—դա դեռ յայտնի չէ։ Աչքի առաջ ունենալով Պարսկաստանի հողային սիստեմը, չէ կարելի սպասել, որ սավրացիների համար նպաստաւոր կարգադրութիւն դուրս բղխէ բարձր իշխանութիւնից, այն իրաւացի պատճառով, որ՝ սկսած Շահից, բարձրաստիճան պաշտօնեաներից և բազմաթիւ հոգևորականներից մինչև յետին պաշտօնեան—գիւղատէր ու կալուածատէր են, որոնց շատը թոյլ չէ տալիս զիջումներ անել ստրուկ գիւղացուն։ Հանգուցեալ Նասրէդդին շահի մի սիպան էր, որ իր տիրապետութեան օրով արքունական բազմաթիւ հողեր գիւղատէրերին ծախեց և այժ տուեց աւանդական ռէժիմին։ Գիւղատէրերը միշտ կախված էին գիւղացիներից, որովհետև հակառակ դէպքում աշխատաւոր գիւղացին միշտ խալիսա հողեր էր գտնում մշակելու և ապրելու. բայց հիմա որ հողը պարսկի ազայի կամ խանի ձեռքումն է գտնվում, հասկանալի է, որ գիւղացին իր դառը քրտինքով հողատիրոջ ստրուկն է։ Մենք հաւատացած ենք, որ Պարսկաստանը ոչ մի ժամանակ բարեկարգութեան ընդունակ չի լինի, քանի որ գոյութիւն կունենան ֆէօդալական սպանիչ կարգերը։ W.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլսից հեռագրում են «Independance Belge» լրագրին, որ սուլթանը ցանկանում է կազմել ի պատիւ գերմանական կայսրի մի մեծ զօրահանդէս, որին կը մասնակցեն 50,000 զանազան տեսակ զինուորներ։

—Մադրիդից հաղորդում են, որ մօտ 50,000-ի է հասնում այն սպանիացիների թիւը, որոնք յայտնել են, թէ ցանկանում են թողնել Կուբան և Պօրտօ-Ռիկօն, որպէս զի չը մնան ամերիկական տիրապետութեան տակ։

—«Standard» լրագրի թղթակիցն ասում է, որ Միացեալ-Նահանգների կառավարութիւնը յայտնել է ռուսաց կառավարութեան, թէ խաղաղութեան կոնֆերենցիային կուզարկվի մի պատգամաւոր Ամերիկայի կողմից։

—Պարիզից եկած հեռագիրները հաղորդում են, որ Ֆրանսիայի անունով Ֆաշօդը գրաւող Մարշանը պատրաստվում է դուրս գալ և թողնել Ֆաշօդը անգլիացիներին։ Այդ դէպքը կարող է շատ նսեմացնել Ֆրանսիայի քաղաքական նշանակութիւնը մի քանի լրագրների կարծիքով։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 սեպտեմբերի։ Թագաւոր Կայսրը սեպտեմբերի 25-ին Լիբաւայից գնաց Կոպենհագէն։

ՊԱՐԻԶ, 26 սեպտեմբերի։ Վճռաջինջ ատեանի խորհրդական Բանդ նշանակված է Դրէյֆուսի դատի վերաքննութեան գործի զեկուցանող։

Կ. ՊՕԼԻՍ, 26 սեպտեմբերի։ Բրիտանական նոր դեսպան Օ'Կոնոր սուլթանին յանձնեց իր հաւատարմագրերը։

ԲԵԼԳՐԱԴ, 26 սեպտեմբերի։ Որովհետև Սերբիայում կառավարական շրջաններում հաստատվեցին, որ թիւրքաց պաշտօնական օրգանները հերքում են արնաուտների գործած բռնութիւնները Հին-Սերբիայի սերբ քրիստոնեաների վրա, այդ պատճառով Սերբիան մի խնդրքով դիմեց մեծ պետութիւններին՝ առաջարկել Բ. Դռան միջոցներ ձեռք առնել գազանութիւններն արգելելու համար։

ԿԱՆԴԻԱ, 26 սեպտեմբերի։ Ալէքսանդրիայից այստեղ հասան Նորթումբերլանդեան հրացանաձիգների գումարտակները, իսկ Մալտա կղզուց՝ դաշտային թնդանօթաձիգ զէնքերի բատարէան։

ԲԵՐՆՍՏՕՐՖ, 26 սեպտեմբերի։ Սեպտեմբերի 26-ի առաւօտեան սպասում են Թագաւոր Կայսրի գալուն Լիբաւայից։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 26 սեպտեմբերի։ «New-York-Herald»-ին հեռագրում են Մանիլայից, որ կուսակցական տարաձայնութիւնները արագութեամբ սաստկանում են, իսկ Ագվինալդո խաղալիք է միայն ապստամբների ձեռքում։

ՊԱՐԻԶ, 26 սեպտեմբերի։ Գործադուլների խմբերը չքնում էին զանազան թաղեր՝ աշխատելով դեռ իրանց աշխատանքները շարունակող բանուորներին գործադուլ անել տալ։ Ոստիկանությունը ցրվեց գործադուլներին և ձերբակալեց մի քանիսին։

ՀՌՈՄ, 26 սեպտեմբերի։ Հաղորդում են, որ շուտով բազմաթիվ կարաբինէրներ կուղարկվեն Կրետէ, որովհետև վճռված է, որ կազմակերպելի միջազգային ժանդարմերիայի կէսը իտալական կարաբինէրներ լինեն։

Կ. ՊՕԼԻՍ, 26 սեպտեմբերի։ Կրետական գործերի վերաբերեալ երէկվայ յանձնած ծանուցագրի մէջ Բ. Դրան ուրախություն է հայտնում ժամանակամիջոց է տրված պատասխանի համար։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 26 սեպտեմբերի։ Ուօկէրից ստացված վերջին տեղեկություններին նայելով հընդիկների հետ շատ օգնական ուժեր են միացել. նրանք դլխովին ապստամբվել են. կռիվ մղելու համար հարկաւոր կը լինի հազար վինուոր։

ԼՕՆԴՕՆ, 26 սեպտեմբերի։ «Times»-ին հաղորդում են Պեկինից, որ նոր նշանակված խընամակալությունը՝ կատարված իրողություն է։ Այրի կայսրուհին ամեն օր մինիստրներին ընդունում է յայտնի կերպով, կայսրի կողքին նստած և ոչ վարագոյրի ետևից, ինչպես առաջ էր։ Կառավարությունը առաջվանից աւելի յետադէմ է, իսկ ցունգ-լի-համէնի մէջ չը կայ մի հատ անդամ, որ տեղեակ լինէր արտաքին գործերին։ Նախագահ կը նշանակվի Ռուսաստանում եղած նախկին դեսպան Խուանտինգ։ Ռուսները ուրախությամբ են ողջունում կառավարչական փոփոխությունը, որովհետև շնորհիւ դրա իրանց ազդեցությունը կաւելանայ Պեկինում։ Այժմ արդէն յայտնի եղաւ, որ այրի կայսրուհու իշխանության գլուխ անցնելու անմիջական շարժառիթը եղել է կայսրի այն հրովարտակը, որով հրամայվում էր պաշտոնեաներին կտրել իրանց ծամերը և եւրոպական զգեստ հագնել։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, 27 սեպտեմբերի։ Թագաւոր Կայսրը «Պոլիտիկա» նաւով այստեղ հասաւ սեպտեմբերի 26-ին. դիմաւորելու ընդառաջ էին գնացել թագաւորը, Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնա, յունաց արքայական զոյգը, Կումբերլանդի դուքսն ու դքսուհին, Ուէլսի իշխանուհին և թագաւորական գերդաստանի միւս անդամները։

ՀՌՈՄ, 27 սեպտեմբերի։ Կառավարությունը Կրետէ կուղարկէ դարձեալ հետևակ զօրագնդեր և երկու նաւ։

ՇԱՆԳՀԱՒ, 27 սեպտեմբերի։ Եանկօու քաղաքի այն մասում, ուր չինացիներն էին ապրում, սոսկալի հրդեհ առաջացաւ, որից բոլորովին այրվեց տասը հազար տուն. հազար մարդ զոհ գնաց։ Այդ անագին հրդեհը երկու քառակուսի անգլիական մղոն տեղ է բռնում։

ՀՌՈՄ, 27 սեպտեմբերի։ Անարխիստների դէմ առնելիք միջոցների քննության համար կոնֆերենցիան կը կայանայ Հռոմում և ոչ թէ Ժընեվում։

ԻՕԿՕՀԱՄԱ, 27 սեպտեմբերի։ Եապոնիան՝ իր հպատակների պաշտպանության համար, երկու պատերազմական նաւ է ուղարկում չինական ջրերը։

ՊԱՐԻԶ, 27 սեպտեմբերի։ Գործադուլ անող հողափորները մերժում են կապալառուների միջումները։ Ճաշից յետոյ ամբոխի մեծ բազմություն գնաց հարևան բօրսայի բանուորներին արգելել աշխատելու։

ՊԱՐԻԶ, 27 սեպտեմբերի։ Սեպտեմբերի 26-ի առաւօտեան աշխատանքները մասամբ վերսկսվեցին Մարսեան ու Ելիսեան դաշտերում և ուրիշ տեղերում։

ՊԷԿԻՆ, 27 սեպտեմբերի։ Դեսպանները յայտնեցին ցունգ-լի-համէնին, որ սպասում են զօրքը տանելու համար ամեն տեսակ դիւրություններ ստանալու և պահանջեցին առանձին վագոններ։ Այստեղ քաղաք հասան 30 դաղախ, 36 ռուս նաւաստի երկու դաշտային թնդանօթներով և 30 հոգի էլ գերմանական հետևակ զինուորներ։ Փողոցի անագին բազմություն էր ժողովվել, բայց որ և է դէպք չը պատահեց։ Ինչպէս երևում է, չինացիների աչքը վախեցել է։

Կ. ՊՕԼԻՍ, 27 սեպտեմբերի։ Կրետէի վերաբերեալ ծանուցագիրը Բ. Դրան յանձնելիս, անգլիական դեսպանի կողմից բերանացի յայտնվեց, որ պատասխանից խոյս տալը, կամ թիւրքաց զօրքերը յետ կանչելուն համաձայնություն չը տալը կը համարվի որպէս մերժումն։

ՊԱՐԻԶ, 27 սեպտեմբերի։ «Figaro» հաւատացնում է, որ կառավարությունը չրջաբերական է ուղարկել բոլոր ժանդարմների գլխաւորներին, յիշեցնելով նրանց այն օրէնքը, որով Օրլէանեան դուքսը աքսորված է Ֆրանսիայից և պատուիրվում է կալանաւորել նրան, եթէ նա փորձէ սահմանն անցնել։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ, 28 սեպտեմբերի։ Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնա և յունաց թագուհին իր ընտանիքի անդամներով ներկայ էին ժամասացությանը այստեղի ուղղափառ եկեղեցում։

ՊԱՐԻԶ, 28 սեպտեմբերի։ Գործադուլ անողները աւելի հանդիստ են պահում իրանց. օրը, ըստ երևոյթին, կանցնի առանց լուրջ դէպքերի։

ՊԱՐԻԶ, 28 սեպտեմբերի։ Պարիզի չրջականների մի քանի գարնիզոններից զօրքեր են ուղարկված այստեղ։ Այդ միջոցը պատճառաբանվում է միմիայն նրանով, թէ անհրաժեշտ էր դիւրացնել պոլիցիայի գործունէությունը։ Որմնադրական գործեր վարող կապալառուները յայտնեցին որմնադիրներին, թէ իրանք դիմեցին իշխանություններին՝ խնդրելով պաշտպանել աշխատանքի ազատությունը։ Խնդիրքը, ըստ երևոյթին, ուշադրության է առնված, և այդ պատճառով նրանք առաջարկում են բանուորներին կրկին աշխատանքի ձեռք զարկել երկուշաբթի։

ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ, 28 սեպտեմբերի։ Փոխադրող նաւը երկու բատալիոն հրացանաձիգներով ճանապարհ ընկաւ դէպի Կրետէ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Սեպտեմբերի 25-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ սրժէ	93 ր.	75 կ.
Բերլինի վրա 100 մարկ „ „	45 „	80 „
Պարիզի վրա 100 ֆրանկ „ „	37 „	15 „
Պոլուխվարեալ	— „	— „
Մաքսային կուպոնները	— „	— „
Բօրսային դիսկոնտ	4½ „	6 „
4% պետական բէնտա	101 „	— „
4% նեղքին փոխառություն	100½ „	— „
4½% դրա. թղթ. ազն. կալ. բանկի	97 „	— „
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի	100 „	— „
Նեղքին 5% առաջին փոխառութ.	294 „	— „
Նոյն երկրորդ —	256½ „	— „
5% դրա. թղթ. ազն. կալ. բանկի.	217 „	— „
5% պետական երկաթուղ. բէնտա	— „	— „
Պետերբ. քաղ. կը. ընկ. օբլ. 5%	— „	— „
Մոսկվայի քաղաք. կը. օբլիգացիաներ.	100¾ „	— „
Օդեսայի — —	100½ „	— „
Թիֆլիսի — —	110¼ „	— „
Թիֆլիսի կալ. բանկի 6% —	100½ „	— „
Նոյնը — — 5% —	100¼ „	— „
Քուրսկի կալ. բանկի. 6%	102 „	— „
Նոյն. — — 5%	100½ „	— „

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մ ա ր դ ա տ ա ր № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ յերեկվայ 4 ժամին և 5 րոպէին։ Թ է փ լ ի ս է հասնում առաւօտեան 8 ժամ 26 րոպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 10 րոպէին։ Բ ա թ ո ւ մ է հասնում երեկոյեան 8 ժամ և 47 րոպէին։

Մ ա ր դ ա տ ա ր № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ գիշերվայ 12 ժամ 20 րոպէին. Թ է փ լ ի ս է հասնում երեկոյեան 6 ժամ և 33 րոպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ՝ երեկոյեան 7 ժամ 48 րոպէին. Բ ա թ ո ւ մ է հասնում առաւօտեան 8 ժամ 28 րոպէին։

Մ ա ր դ ա տ ա ր № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ առաւօտեան 8 ժամ 20 րոպէին։ Թ է փ լ ի ս է հասնում երեկոյեան 8 ժամ 22 րոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս՝ երեկոյեան 9 ժամ 5 րոպէին։ Բ ա գ ո ւ է հասնում յերեկվայ 12 ժամ 59 րոպէին։

Մարդատար № 4 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 35 րոպէին։ Թ է փ լ ի ս է հասնում առաւօտեան 9 ժամ 7 րոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս առաւօտեան 10 ժամ 57 րոպէին։ Բ ա գ ո ւ է հասնում առաւօտեան 5 ժամ 45 րոպէին։

Լոյս տեսաւ
ԳԷՈՐԳ ԲՐԱՆԴԷՍԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՒ ՀԵՐՈՍԸ
Թարմ. Տ. Յովհաննիսեան
ԳԻՆԸ 25 ԿՈՊԷԿ
Վաճառվում է Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում։ 2—5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժության, վենէրական (սիֆիլիս) և մրսածութ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1¼—2¼ ժ. ներքին և միասեռական հ. ականջի, կոկորդի և քթի հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՋԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Ն. ՇՊԱԿՈՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժություն), վենէրական և մրսածի հ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտություններ է անում մէզի, խիտի, արեան, կաթի և ալն։
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
26—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Գրասենեակում վաճառվում են՝

	Ր.	Կ.
ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ	1	»
ՍՏԵՓԱՆՆՈՍ ՏԱՐՕՆԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.	2	»
ԹԻՖԼԻՍԵՑՈՑ ՄՏԱՒՈՐ ԿԵԱՆՔԸ	1	50
ՂԵՒՈՆԴ ՊԱՏՄԱԳԻՐ	2	»
ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ ուսուցիչների համար.	1	75
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Դարեալի.	1	25
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ Լունկեվիչի	1	»
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԱՍՏՂԱԲԱՇՈՒԹԻՒՆ Ֆըլամմարիոնի	1	»
ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Գարագաշեանի.	4	»
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, Պալասանեանի	1	50
ԱԿՆԱՑ ՀՆՈՒԹԻՒՆՔ, Ճանիկեանի	2	»
ՄԱՆԿԱԿԱՆ ԼՕՏՕ, (հայ., ռուս., ֆրանսերէն և վրացերէն)	1	20
ԱԶԳԱՑԻՆ ՁՕՁԵՐ, Պարոնեանի	1	»
ԴԱՒԻԹ ԿՈՊՊԵՐՖԻԼԴ, Դիկկենսի	1	»
ՎԷՊԻԿՆԵՐ և ԶՐՈՑՑՆԵՐ, Մօպասանի	1	»
ՑՈ՞ ԵՐԹԱՍ, Սենկեվիչի	1	50
ՄԱՐԴ ԵՄ, Էբերսի	1	»

Դիմել՝ Тифлисъ. Тифлисское Общес. Изд. Арм. книгъ. 1—15

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
Ազգագրական Հանդիսի
ԲԱԾԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Լոյս է տեսել № 1, իսկ № 2 լոյս կը տեսնի դեկտեմբերին։
Բաժանորդագին՝ 3 ր.
Դիմել՝ Ерванду Лалаянъ. Тифлисъ, Семинарія Нерсисянъ. (Ե. Հ.) 1—10

ՀԱՐԿԱՒՈՐ Է
ՀԱՅ ՎԱՐԺՈՒՀԻ
Երկու երեխայի հետ պարապելու Գողթան գաւառի Հանդամէջ գիւղում։ Պայմանների մասին դիմել՝ Николаевская ул., № 96.
1—3

ԲԺՇԿԱՊԵՏ Ե. Ի. ՖՐԱՆՑԻՈՒՍ
մասնագէտ կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւնների։
Ընդունում է 5—7 ժամը երեկոյեան. Վելեմինովսկայա փողոց, տուն № 4, Դումայի հանդէպ։
(Ե. Հ. Ո.) 13—30

4—11 (առն. 28)

Մուխրանսկայա և Անչիխատի փողոցների վրա Ի. Ալէքսանդր Մուխրանսկու տանը
ՄՆՈՒՄ ԵՆ ԷԼԻ ԵՐԵՔ ՅԱՐՄԱՐԱՒՈՐ ԿԱՅԱՐԱՆՆԵՐ՝
ամեն մէկը բաղկացած 4 սենեակից իրանց խոհանոցով. մէկ կայարան՝ բաղկացած երկու սենեակից իր խոհանոցով։ Ինը սենեակներ իրանց խոհանոցներով, վեց առանձին սենեակներ, 8 խանութ, երկու չոր և հով ներքնատուն՝ շատ յարմար խմիչքեղէնի և մանաւանդ գինու և սպիրտի համար։
Տանտիրոջը կարելի է տեսնել՝ Լաբորատորնայա փողոցում, տ. № 9։ (Ե. Հ.) 1—2

ԹԻՖԼԻՍԻ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ
ընդունելության քննությունները նշանակված են հոկտեմբերի 10-ին և 12-ին։ Ընդունելությունը լինելու է միայն պատրաստական դասարանում և կընդունվեն միմիայն գիշերօթիկներ։ 2—3

☛ ԴՊՐՈՑ ☚
Մ. Ի. ԱՍԼԱՄԱԶՕՎԱ-ՆԱՀԱՊԵՏՕՎԱՅԻ
(Աւարտած Բարձրագոյն իգական կուրսերում)
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՄԵՆ ՕՐ
Ուսումն սկսված է սեպտեմբերի 1-ից։ Հասցէն՝ Ֆրէյլինսկայա փողոց, № 14. 8—10

ՎԱՃԱՌԱՀԱՆՎԵՑ ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ
ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ ՎՆԱՍՎԱԾ ՀԱՅԵՐԻՆ
ԵՐԿՐՈՐԴ, ՆՈՐԻՑ ՄՇԱԿՎԱԾ ԵՒ ԼՐԱՑՐԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԳԻՆԸ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ, 3 Ր. 70 ԿՈՊԷԿ
2-ое вновь обработанное и дополненное изданіе
ЛИТЕРАТУРНО-НАУЧНАГО СБОРНИКА
„БРАТСКАЯ ПОМОЩЬ ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ“.
Въ настоящее удешевленное изданіе, содержащее болѣе 140 статей разнообразнаго содержанія въ прозѣ и въ стихахъ, вошло болѣе 40 новыхъ, знакомящихъ съ одной стороны съ ужасающими бѣдствіями турецкихъ армянъ, а съ другой—съ бытовыми и культурными условіями жизни армянъ въ прошломъ и въ настоящемъ. Къ книгѣ приложены двѣ отдѣльныя большія группы (болѣе 100 человѣкъ) армянъ-переселенцевъ, снятыя съ натуры, а также болѣе 150 рисунковъ (40 новыхъ), въ томъ числѣ многіе въ цвѣтныхъ краскахъ и два: „Рѣзня армянъ въ Требизондѣ 1895 г.“ И. К. Айвазовскаго и „Весенняя буря“ Магдесіана, въ три тона.
Цѣна 3 р., съ пересылкой 3 р. 70 к.
Складъ въ конторѣ *Русскихъ Вѣдомостей* и въ книжн. магаз. Карбасникова на Моховой.
NB. Лица, не окончившія счетовъ по 1-му изданію «Братской помощи», благоволятъ поспѣшить окончаніемъ таковыхъ.
Покорнѣйшая просьба къ изданіямъ, сочувствующимъ цѣли сборника, перепечатать настоящее объявленіе.
9—10 Завѣд. ред. Гр. Джаншіевъ.

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Сентября 1898 г. Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13